

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Յարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի:
Առաձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мпакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կերթնի առևտուրը. Նամակ Աղստաֆայից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱ-
ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միլիտարիզմը զբաղանդութեան
մէջ. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր. —
ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Թիֆլիսի հայ-կաթօրիկները.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵՐԹՆԻ ԱՌԵՆՏՈՒՐԸ

Կերթնի առևտուրը կատարեալ ճշնամբ մի
մէջ է. կերթնիավաճառներին պահիական սար-
սափ է պատել. շատերը նրանցից իրանց կարո-
ղութիւնները իսպառ կորցնելու վտանգի մէջ են
գտնվում: Ռուսաստանի համար պահանջը հա-
մարեան դադարած է, արտասահման արտահան-
վում է շատ չափաւոր քանակութեամբ և այն բա-
ցառապէս անդուկներով, ածով չորհնաւերը այ-
ժմ լրիստ սակաւ են գալիս Բաթումից: Տեղիս
բոլոր նաւթաշտեմարանները (բէզէրովուարները)
լցված են բառի բուն նշանակութեամբ. չը դի-
տեն ուր պահեն Բաթումի անդադար ստացվող
կերթնի: Գինը իջնում է օրից օր, ժամից ժամ,
Բաթումի մէջ 28 կոպէկից արդէն 11 կոպէկի է
իջել, իսկ տեղս 45—46 կոպէկից՝ իջել է 28—
29 կոպէկի: Ահա թէ ինչ հետեանք ունենցաւ. կե-
րթնի վրա ակցիղ նշանակելը, որ տեղի ունե-
ցաւ հազիւ ամիս ու կէս սրանից առաջ:

Կերթնի ակցիղի ենթարկելու ձայների վրա,
անցեալ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներում և
յուշմարի սկզբներում սկսեցին չափազանց մեծ
քանակութեամբ կերթնի արտահանել թէ ար-
տասահման և թէ դէպի Ռուսաստան: Այդ ժա-
մանակ կերթնի առևտուրը ազատ էր ամենքի
համար և նրան ստանալու համար ոչ մի օրէնք
կամ կանոն չէր կար, ամեն ոք իր համար առնել
էր տալիս Բաթում և տեղս բերել տալով վաճա-
ռում էր առաջին հանդիպողին և այն ուղղակի
երկաթուղու բեռնազրկ երեսով: Այցիղի մտցնել-
ու օրից միանգամայն վերջ դրվեցաւ այդ ազա-
տութեան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ-ԿԱԹՕԼԻԿՆԵՐԸ

(Նիւթեր հայ-կաթօրիկներին պատմութեան)

Վրացական և հայական հայ-կաթօրիկները մէջ
արհեստական կերպով և անքննադատ եղանակով յա-
րուցված վէճը մի այնպիսի գեղեցիկ դաս էր
հայ-կաթօրիկներին, որ անկարելի էր այդ խնդրի
հետ կապված չը համարել լատին եպիսկոպոսի
նպատակը՝ որն է, չլստել հայ-կաթօրիկներին նոր
զարգացող ոյժերը, և լատինականութիւնը տա-
րածել նաև հայ-կաթօրիկներին մէջ:

Լատին եպիսկոպոսը, պարզապէս պաշտպանե-
լով վրացական հայ-կաթօրիկներին, կամենում էր
մի նոր հերձուածք առաջ բերել հայ-կաթօրիկնե-
րի մէջ, և հէնց այդ պատճառով սաստկապէս
հալածվեցան այն հայ-կաթօրիկ քահանաները, ո-
րոնք պաշտպանում էին մայրենի եկեղեցու իրա-
ւունքները, և դրա հակառակ, միշտ առանձին
պաշտպանութիւն են վայելում այն վրացական
հայ-կաթօրիկները, որոնք տրամադիր են մոռա-
նալ հայոց լեզուն, և եկեղեցու արարողութիւնը
կատարել վրաց լեզուով:

Բայց ուրախակամ այն էր, որ ի վերջոյ Սարգ-
սիսի լատին եպիսկոպոսն անգամ համոզվեցաւ
վրացականների հայ-կաթօրիկ լինելը, ինչպէս
պէտք է ցոյց տանք չարունակութեան մէջ:

Նախ և առջ ակցիղի վարչութեան կողմից
նշանակված ծառայողների անփորձութեան շնոր-
հով չափազանց դժուարացաւ ապրանքի ստանալը
երկաթուղուց, որովհետև այժմ ապրանքի բեռնա-
դրերը զրկվում են ոչ թէ ապրանքատէրերին, այլ
ակցիղի պաշտօնականին, ուստի և դանազան ձեռ-
կանութեանց պատճառով շատ անցում այնպէս է
պատահում, որ ապրանքը տեղ հասնելուց երկու,
երեք օր է անցնում, մինչև որ ապրանքատէրը
կարողանում է ձեռք բերել բեռնազրկը: Պէտք է
է իմանալ, որ երկաթուղու կանոնների համաձայն,
եթէ կերթնի վաճօնի տեղ հասած ժամանակը չը
վճարեն ճանապարհավարձը և չազատեն վաճօնը,
պարտաւոր են իւրաքանչիւր 12 ժամի համար 6
բուբլի տուգանք վճարել:

Այնուհետև յայտնվեցաւ, որ նոր կանոնների
համաձայն կերթնի կարող են ստանալ միմիայն
կերթնի պահեստ ունեցողները, իսկ կողմնակի
անձինք՝ եթէ կերթնի բերել տալու լինեն՝ ան-
պատճառ պարտաւոր են պահեստ ունեցողին հաս-
ցնել բերել տալ: Պարզ հասկանալի է, որ այս
հանգամանքի շնորհով միանգամայն ճնշվում և
կաշկանդվում է կերթնի առևտուրը: Առաջ ա-
մեն ցանկացող ազատ առնում էր կերթնի և
երկաթուղու բեռնազրկ երեսով վաճառում էր,
ուր որ աւելի ձեռնառու էր համարում. իսկ այժմ
նա պարտաւոր է առաջագոյն համաձայնութիւն
կայացնել պահեստ ունեցողին հետ և ապա միայն
ապրանք բերել տալ. հակառակ դէպքում նա
հարկադրված կը լինի ընդունել պահեստատիրոջ
ամեն մի առաջարկութիւնը:

Սրանց վրա պէտք է աւելացրած և այն դժուա-
րութիւններն ու նեղութիւնները, որ քաջում են
կերթնի առևտուրով պարագայողները, մինչև որ
կարողանում են ձեռք բերել թէ արտասահման և
թէ Ռուսաստան ճանապարհելի կերթնի համար
հարկաւոր արտոնաթղիքներ:

Կովկասեան երկրի ակցիղի վարչութեան կա-
ռավարիչ պ. Մարկով անցելով նաւթի առև-
տուրի երկու կենտրոնները՝ Բաթում և Բաթումը
և անձամբ վերահաս լինելով՝ որ կերթնի առև-
տուրը դժուարութեամբ կարող է շարունակվել
ներկայ պայմանների տակ, կերթնիավաճառնե-
րին խոստացաւ իր աջակցութիւնը ամենայն կերպ

ղերութեան ձեռք բերելու համար: Իսկ միակ մի-
ջոցը, որպէս զի կերթնի առևտուրը անարդէք և
ղերութեամբ կարելի լինի շարունակել թէ ար-
տասահմանի և թէ Ռուսաստանի հետ, կայանում
է նրանում, որ Բաթումը ազատ մնայ ակցիղից,
մի տեսակ պորտո-ֆրանկօ լինի կերթնի վերա-
բերութեամբ: Այն ժամանակ կերթնի Բաթումից
առանց ակցիղի և ազատ կուղարկվի Բաթում,
այստեղից որքան արտասահման է ուղարկվելու՝
կը ճանապարհի առաջվայ պէս, իսկ Ռուսաս-
տան ուղարկվելի քանակութեան համար արդէն
այստեղ կը վճարվի հարկաւոր ակցիղու վաճա-
ռականների կողմից արդէն այս մտքով մի խնդ-
րագիր կազմվեցաւ բարձր կառավարութեան ներ-
կայացնելու համար:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԱՂՍՏԱՖԱՅԻՑ

Մարտի 1-ին

Ապրանքակիր երկու գնացքներ երկ և առաւ-
տեան ժամը 10-ին հանդիպեցան իրար. առաջին
գնացքը կայարանի մէջ պոյոյտներ էր անում, երբ
Բաթումից եկող գնացքին նշան տուեցին կայարան
մտնել. կողմնակի գծերի վրա ճանապարհը բաց-
ված չը լինելով, գնացքը անցաւ այն գծի վրա,
որտեղ առաջին գնացքը կանգնած էր. աչքի ա-
ռաջ ունենալով անխուսափելի վտանգը, այդքան
միայն կարողացաւ անել մեքենայի վրայ, որ շոգե-
մեքենան անցկացրեց ուրիշ գծի վրա և եկող
գնացքը հանդիպեց միայն նրա ետեղի կացրած
վաճօններին, որոնցից վեցի չափ վնասվեցան. մի
վաճօնի անիւները փչւեցան և ամբողջ նաւթը
դուրս թափվեց: Շոգեմեքենան գրէթէ երկու մա-
սի բաժանվեց, յետևի կողմից ծակվեցաւ և շուրջ
սկսեց թափվել, բայց մարդիկներին հետ դժբաղ-
դութիւններ չեղան:

Մեղաբարձ են «СОСТАВИТЕЛЬ»-ին, (գնացք
կազմակերպողին). նա սիգնալ նշան տուեց այն
ժամանակ, երբ ճանապարհը գնացքի համար բաց-
ված էր: Այդ «составитель» ասված մարդիկ եր-
կաթուղու մի տեսակ հասարակ ծառայողներ են
հաշվում. նրանք ստանում են ամսական 15—
20 բուբլի և ուժիկ և ամբողջ օրը բաց տա-

ծող վերադառնալով եպիսկոպոս դասան Նրան
յաջորդեց Բարադաման վարդապետը:

Հայր Պողոս վարդապետ Դաւիթբեկեան, մինչև
Ախալցխայի հայ-կաթօրիկ գաղթականների դաշը,
Թիֆլիսում էր տեղացի հայ-կաթօրիկներին ծը-
լակաւ քահանայ: Այդ Պողոս վար. Դաւիթբեկեան
ունի բազմաթիւ աշակերտներ քահանայ ձեռնա-
դրված, որոնցից մի քանիսը յետոյ դասան վրա-
ցական հայ-կաթօրիկների առաջնորդ Դաւիթբեկե-
անի յետոյ Թիֆլիսի հայ-կաթօրիկների ծխական-
ներ էին տէր-Յակոբ քահանայ Վաչագանեան, (Լո-
ւեցի), տէր-Վաղարշ քահանայ Վաչագանեան,
տէր-Պողոս լաղարեան, տէր-Պետրոս Մանուկով
(Ախալցխայի), հայր Զաքարիայ Գուրգենեան (Թիֆ-
լիսի) և վերջերս հայր Գ. Սափարեան:

Եւ այդպիսով Թիֆլիսի հայ-կաթօրիկները շա-
րունակ ունեցել են իրանց հայ-կաթօրիկ քա-
հանաները, որոնք ինքնաձեռնադրութեան չունէին
հայ-եկեղեցական ծէսերը, և արարողութիւնները
պահպանելու համար իրանց եկեղեցու մէջ: Այդ
պատճառով Թիֆլիսի հայ-կաթօրիկ եկեղեցու
վարչութիւնը աստիճանաբար անցաւ այն հայ-
կաթօրիկ եկեղեցականների ձեռքը, որոնք չը
նայած որ հայ-կաթօրիկներ են, բայց լա-
տինական թեոքրութիւնից. ստիպված, կամե-
նում են ցոյց տալ իրանց իրեր վրացի կաթօ-
րիկներ, լատինական ծէսով և արարողութեամբ:
Այդ լատինականութեան դիմած վրացական հայ-
կաթօրիկներին մասին այստեղ հարկաւոր եմ հա-
մարում մի փոքր շեղվել, և ընթերցողներին ուշա-
դրութիւն դարձնել այն կէտի վրա, թէ ինչ
պատճառներից ստիպված հայ-կաթօրիկները շա-
տերը, որոնք մոռացել էին իրանց մայրենի լե-

րածութեան մէջ, անձրևի, ձիւնի և ցիւխի մէջ շատ
աւելի են գործում, քան նոյն երկաթուղու ընկերու-
թեան Թիֆլիսի «կոնսորցիում» նստող և հարկա-
ներով ստացող օրիորդները: Այդ մարդիկ, որոնց
ձեռքի մի սխալ շարժումը կարող է հարկաւոր
մարդկանց «ի վերին յորտաղէմ» ճանապար-
հել:

Բայց ինչ էլ ուզում է լինի, երկ մարդ չը
մնաց, որ թափված նաւթից իր մասը չը հանէր.
աման ունեցողը վաղ էր տալիս, գոնէ մի ան-
գամ Անդրկովկասեան երկաթուղու պարզաւոր
բարիքը վայելելու:

Աբ. Ապ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներքին գործերի և հաղորդակցութեան ճանա-
պարհների միջնորդի համաձայնութեամբ հարց է
է յարուցված բոլոր երկաթուղիների վրա առող-
ջապահական տեսուչներ նշանակելու մասին: Այդ
տեսուչների պարտաւորութիւնը կը լինի պարբե-
րաբար հսկել երկաթուղային շինութիւնների ա-
ռողջապահական դրութեան վրա:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ
չուտով Ամերիկա պէտք է ուղարկվեն մի քանի
մասնագէտներ, բամբակի մշակութեան եղանակ-
ները ուսումնասիրելու համար: Այդ մասնագէտ-
ները վերադառնալով՝ պէտք է նպաստեն բամբա-
կի մշակութեան և արդիւնաբերութեան զարգա-
նալուն: Անդրկովկասեան երկրում:

Մեղ ուղարկված է Թիֆլիսում հրատարակված
մի գրքոյկ, որը կրում է «Շոշվայ դալին խէրն ու
շառը» վերնագրերը: Դա ֆելիտոնական ձևով և
Ղարաբաղի բարբառով գրած մի քանի յորտաժ-
ների ժողովածո է, որի մէջ տեղ-տեղ նկատվում
է սրամտութիւն և բաւական իւրօր Բայց բովան-
դակութեան կողմից գրքոյկը շատ աղքատ է:
Ճշմարիտ է, գրքոյկի մէջ կան մի քանի աղող ե-
րեսներ, բայց բովանդակութեան նշանաւոր մա-
սը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գանազան և շատ ան-
գամ անտեղի անխաղաղութիւններ այս կամ այն
մարդու և այս կամ այն մասնաւոր դէպքերի վը-

ղուն, այժմ չեն կամենում խոստովանել իրանց
հայ լինելը, այլ աւելի տրամադիր են իրանց
վրացի-կաթօրիկ լուրերու:

Մինչև Ախալցխայի հայ-կաթօրիկների հոգևոր
կառավարութեան բացվելը և այդ թիւը ժամա-
նակաւորապէս Սարատովի լատին եպիսկոպոսին
յանձնվելը, հայ-կաթօրիկ քահանաների ձեռնա-
դրութիւնը լինում էր Ս. Պետրուրուզի լատինա-
կան կողմից ղեկավար եպիսկոպոսի ձեռքով: Բուն
ախալցխայի վրացախոս հայ-կաթօրիկ քահանայ՝
տէր-Պետրոս Խարիսմարով, որը հայր Պողոս վարդ.,
Դաւիթբեկեանի աշակերտներից էր և հայ-կաթօրիկ
արարողութեան վրա ձեռնադրած 1843 թվակա-
նում, որպէս ծխական քահանայ բնակվում էր Ա-
խալցխայի մէջ, երբեմն այցելելով նաև Թիֆլիսի
հայ-կաթօրիկ ժողովուրդը:

1849 թվականին այդ Խարիսմարեան քահանան
մտադրվում էր ուխտ գնալ յորտաղէմ, բայց Կ.
Պոլիս հասնելով փոխում է իր մտադրութիւնը և
մնում է Կ. Պոլսի լատին պատուիրակի իրաւա-
սութեան ներքոյ:

Այդ թվականներում հասունեան խնդրը ահ-
ռելի կերպարանք էր առել: Մի կողմից լատին
եպիսկոպոսը և հատուկեան կուսակցութիւնը, միւս
կողմից Վենետիկի Միթիթարեանները և բազմա-
մասիւ ժողովուրդներ միմեանց դէմ կրօնական
բանակութիւն էին մղում: Պապի լատին նուիրակը
արդէն կասկածելի էր համարել հայ-կաթօրիկու-
թեան ապագան, և որոնում էր նորաւոր հնար-
ներ նիւթել պապականութեան օգտին: Բայց ո-
րովհետև Ռուսաստանի մէջ արդէն օրինական ձև
էին ստացել հայ-կաթօրիկներին և լատին եպիսկո-
պոսի յարաբերութիւնները, և ուստաց կառավա-

րա, որոնք հասկանալի կը լինեն գուցէ միայն Շուշիում: Հասարակութիւնը դէպի ընթերցանութիւն հրաւիրելը համարելի ձգտում է, բայց այդ դեռ չէ նշանակում, որ դուրս համար կարելի է պատճառել տեսնել զրոյ: Ամեն մի պատճառ կա՝ մեծ է մեծ հետաքրքրութիւն պատճառել. բայց մեծ չէ յայտնի, որ պատճառները չեն կրթում, այլ անբարոյականացնում են: Յիշեալ գրքերի հեղինակը իր սրամիտ իմօրով կարող էր անկասկած աշխուրհիւս ունենալ, եթէ հոգար և դուռածքի բովանդակութեան մասին:

Ստացանք Դարբն-Գարալազեանի գաւառի Են-գիճայ գիւղից, պ. Պետրոս Խախանեանից 17 բուլբուլ յօգուտ գէյթունցիներին, որ պարոնը հաւաքել է պ. Պողոս Մէլիք-Ամիրզանի տանը գտնված հասարակութիւնից: Նախկին 108 բուլբուլի 70 կօպ. գումարին աւելացնելով այդ 17 բուլբուլին, կունենանք այժմ յօգուտ Զէյթունի հրկիզեալների ընդամենը 125 բ. 70 կօպ.:

Մեզ գրում են Ի.Գ.Ի.Ի.Յ, որ կարմրուկը շարունակում է քաղաքի գոհեր տանել Սուրմալուի գաւառում: Սկալ են այն տարածված լուրերը, աւելացնում է թղթակիցը, որ իբր թէ կարմրուկի էպիդեմիան արդէն վերջացել է Սուրմալուի գաւառում:

Ստացանք պ. Նիկողայոս Բարուրեանցից, կատա-իվանովից, 5 բուլբուլ յօգուտ Զէյթունի հրկիզեալների: Նախկին 125 բուլբուլի 70 կ. գումարին հետ կունենանք այժմ յօգուտ գէյթունցիներին 130 բ. 70 կօպէ:

«Արձագանք» շաբաթաթիւթի մէջ կարդում ենք, որ Թիֆլիսի գերմանական հիւպատոսի պաշտօնակատարի կարգադրութեամբ տեղին գերմանական (լուծեալական) եկեղեցում մարտի 3-ին կատարվեցաւ Վիլհելմ կայսրի հուղեանդիւնը: Ներկայ էր ամբողջ գերմանական գաղթականութիւնը: Օտար ազգութիւններից բազմաթիւ էին հայերը: Զինուորական և քաղաքացիական պաշտօնեաները եկել էին եկեղեցին հիւպատոսի առանձին հրաւերով: Հոգեհանգստին ներկայ էր և թեմիս առաջնորդ Արքեպիսկոպոս սրբազանը: Հոգեհանգստից յետոյ, երբ գերմանական հիւպատոսը մօտենալով սրբազանին յայտնեց նրան իր չնորհակալութիւնը, սրբազանը օրհնելով նրան, յայտնեց իր ցաւակցութիւնը:

Հրատարակվեցաւ «Աղբիւր» ամսագրի մարտ ամսի տետրակը (№ 3) և ուղարկվեցաւ բաժանորդներին:

Ըրթիւնը պատկի հետ բանակցութեան վերջնական որոշման համաձայն (1847 թ. յունիս. 22) հայ-կաթօլիկները ժամանակաւորապէս էին յանձնված Սարատովի լատին եպիսկոպոսին մինչև ունենալու իրանց սեփական թեմական եպիսկոպոսը, այդ պատճառով կ. Պոլսի լատին նուիրակի զինում ծագում է մի գեղեցիկ միտք՝ վրացի կաթօլիկութիւն հաստատել կովկասի մէջ:

Բայց որովհետեւ պետական օրէնքով արգելվում է ուղղափառ վրացի կրօնաւորութեան գիւմել, այդ պատճառով վրացական հայ-կաթօլիկները արդէն պատրաստի ժողովուրդ էին նոցա համար: Եւ այդպիսով խորհրդանշան քահանային աջողկեցաւ կ. Պոլսում վանք և միաբնակութիւն հաստատել վրացի հայ-կաթօլիկների համար քահանայ պատրաստելու նպատակով: Բազմաթիւ աշակերտներ նա քահանայ ձեռնադրեց լատինական արարողութեան համաձայն, որպէս «վրացի կաթօլիկներ», որոնք երբեք գոյութիւն չունէին աշխարհիս երեսին: Մի քանի աշակերտներ էլ նա ձեռնադրեց յոյն կաթօլիկներին համար:

Այդ երեւոյթը հայ-կաթօլիկների մէջ զարմանալի բան չէ կարող համարվել, որովհետեւ եկեղեցի հաստատել առանց ծխականների և տիպիկ տալ առանց օրինական և իրական վիճակների սովորական բաներ են կաթօլիկութեան մէջ, որովհետեւ մենք ունեցել ենք հայ-կաթօլիկ եպիսկոպոս «Սիւնեաց» և «Էջմիածնի» տիտղոսով, ուր կաթօլիկութեան հոտն անդամ չը կայ: Պրօպագանդայի զբաղման վիճակը շատ ապահով էր, նա կարող էր այդպիսի մտքեր յղանալ, որը իրականութեան հակառակ և կրօնական գործին էլ երբեմն վնասակար կարող էր լինել: Այդ խորհրդանշան քահանայի ձեռնադրածներից (լատինական

Վրաց «Իվլերիա» լրագրին ԹէլԱիից գրում են, որ այնտեղի ընտանիքները մտադիր են դիմել ուր հարկն է, որ կվարելու գետեղված Անդրկովկասի նորակազմ զինուորները տեղափոխվեն Թէլաւ քաղաքը, երկրի առեւտուրը կենդանացնելու համար: Խոկայդ նպատակը իրագործելու դիտարկութեամբ քաղաքացիք խոստանում են բնակարան շինելու համար առաւ տեղ և միանգամայն յատկացնել 10,000 բուլբուլ:

Նոյն տեղից հաղորդում են մի և նոյն լրագրին, որ երկար ժամանակից է վեր քաղաքացիք մեծ ջանք էին գործ դնում, որ ԹէլԱի քաղաքում հաստատվի մի դեղատուն. վերջապէս նրանք հասան այդ նպատակին, որովհետեւ ահա քանի մի ժամանակ է, որ այդտեղ արդէն հաստատված է դեղատուն: Սակայն այդ դեղատան մէջ դեղերը վաճառուում են ոչ թէ բոլոր դեղատների համար կառավարութիւնից հաստատված սակայնով, այլ այդ սակագներից շատ աւել գնով: Խոկ Թէլաւի բժիշկները ուշադրութիւն չեն դարձնում այդ անկանօնութեան վրա:

Այս րօպէիս Թիֆլիսիում գտնվում է մի հրէայ, որը քիչ չէ կեղեքում ժողովուրդը: Նա շահաւորական տեսակետից դիմում է հետեւեալ խաղալս միջոցին: Նա մեծ գումարով առնում է դանազան գաւառներական ապրանքներ և եռապատիկ գներ նշանակելով այդ ապրանքներին վրա, աճուրդով ծախել է տարի այդ ապրանքը, իսկ ժողովուրդը կարծելով որ ապրանքի տէրը ճարտահաշուայ կիսագնով աճուրդի տակ է գցել - ապրանքը, միաժամաբար խաղալում է աճուրդ անունը լսելով և մեծ ուրախութեամբ մէկին երեք գին վճարելով առնում է ապրանքը: Իւ այդպէս ամեն շաբաթ գուցէ կը տեսնէք այդ խաղալս մտրուկ թաւամշակի քաղաքային առաջ այդպիսի խորամանկութեամբ աճուրդով վաճառելով իր ապրանքը:

Վրաստանի գրեթէ բոլոր կողմերից, թէ գիւղերից և թէ քաղաքներից, անդադար դրում են վրաց «Իվլերիա» լրագրին, որ այդ գիւղերում ամենատարիկ կերպով տարածված են դանազան տարախոտիկ հիւսնաբուխներ, որոնց դարգահայտն նպատակում է ժողովուրդի նախապաշարմունքը: Բժիշկներ թէ՛ն այցելում են այդ վարակված տեղերը, բայց գիւղացի ամբօրը չէ հետեւում բժշկի խորհրդին և նրա դրած դեղատոմսը պատռելուց և դէն գցելուց յետոյ, դարձեալ գիւմում է ամենաանհապետական և վնասակար միջոցների: Այդ պատճառով վրա աւելանում է և մի ուրիշ պատճառ, այն է անլիքանալի գոլութիւնները, որոնք մեծ չափերով վարակացած են Վրաստանի խորքերում, այնպէս որ ոչ թէ

եպիսկոպոսի ձեռնադրած) շատերը կան որպէս լատինական ուխտի ձեռնադրված պատերներ, որպիսիք են՝ Սիմէոն Խիթարեան (այժմ պատրի Ալֆոնս), Պետրոս Ղալաբեան (այժմ պատրի Պալլէ), Ստեփաննոս Նիզանեան (այժմ պատրի Ստէֆան Նիզանով), Յովսէփ Նիփիսեան (այժմ Ֆրանչիսկո Նիփիսեան), այդպէս և Մուսթաֆեան, Բարսեղեան, Աթոյեան, Մարկիսեան, Սարգսեան, Չիլինկարեան, Մարտիրոսեան, Մամիկոնեան և այլն, որոնք ձեռնադրված են լատինական ձէսի համաձայն, բայց բոլորն էլ հայ ժողովուրդից են և հայ-կաթօլիկ ժողովուրդի որդիք՝ Ախալքալաքի և Ախալցխայի գաւառից, որոնք աշակերտելով կ. Պոլսի միաբնակութեան մէջ, ձեռնադրվել են լատինական ձէսով, և որոնք այժմ իրանց «վրացի կաթօլիկներ» են համարում, բայց սրտով և հոգով լատին պատերներ:

Այդ լատինական ձէսով ձեռնադրված հայ-կաթօլիկ վրացական քահանաներից մի քանիքը սրբապետներ Անդրկովկաս, և չը նայելով օրինաց այն կէտին, որ անկարելի էր արտասահմանեան ձեռնադրված քահանան Անդրկովկասի հայ-կաթօլիկ ծխականներ նշանակել, բայց և այնպէս Սարատովի լատին եպիսկոպոսը աջողեցրեց այդ խնդիրը և այժմ մի քանի վրացական հայ-կաթօլիկ լատին քահանաներ ծխականներ են Թիֆլիսի հայ-կաթօլիկների եկեղեցում, Ախալցխայում և Փոթիի ու Քութայիսի մէջ: Այդ վրացական հայ-կաթօլիկ քահանաները հայ-կաթօլիկ եկեղեցիների պատարագը լատինական արարողութեամբ կատարելուց յետոյ, աւետարանը և քարոզը վրացերէն էին խօսում եկեղեցիների մէջ, և ապա բոլորովին հայ-կաթօլիկութիւնը բարձի թողի արին և աշխուսեցին լատինականութիւնը տարածել կովկասի մէջ, վր-

միայն դրսում արածող տաւարը և տան միջի իրեղէններն են գողացվում, այլ մինչև անգամ թխած հացն էլ ազատ չէ մնում գողերի յափշտակութիւնից:

Ինչպէս յայտնի է, արդէն երկար ժամանակից է վեր Թիֆլիսի վէրա կոչված քաղաքամասում գտնվող ուղղափառ դաւանութեան պատկանող գերեզմանատունը փակված է: Այժմ թէ ուսմանը, և թէ վրացիք իրանց ննջեցեալներին թաղում են Սարէլիօլի գորանոցի մօտ գտնվող նոր գերեզմանոցում, բայց այդ գորանոցի առջև դռնվող փողոցը, որտեղից անց են կացնում ննջեցեալներին, արքան անկարգ դրութեան մէջ է և անձրեային օրերը այդտեղ այնքան ցեխ է լինում, որ շատ անգամ ննջեցեալներին կառքով էլ անհաւրին է լինում անցկացնել: Խոկ քաղաք այդ փողոցը կանօնաւորելու համար ոչ թէ միայն հող չէ տանում, այլ չը նայելով որ արդէն վաղուց այդ փողոցի վրա ապրող բնակիչներից փող է ժողովել փողոցը քարել տալու համար, բայց այնու ամենայն երբ բնակիչները այդ մասին դիմում են խնդրելով, այդ խնդրը միշտ անհետեւանք է մնում:

Վերջին ժամանակներս Թիֆլիսի բնակիչները հեռագետ ընտելանալով Աւսթայի աղբիւրներից վերցրած ջրանցքի ջրին, արդէն մեծ մասամբ գործ են ածում այդ ջուրը, բայց ջրանցքի ջրաժան ծորակների միմեանցից շատ հեռու լինելը մեծ անյարմարութիւններ է ներկայացնում բնակիչներին ջրից օգտվելու համար, քանի որ չը նայելով որ ջրանցքի խողովակները աւելի մեծ տարածութեան վրա են անցկացրած, բայց այնու ամենայն ջրաժան ծորակների մէկը գտնվում է Մթածմիլոյա կոչված թաղում, միւսը Սոլոկի վերջում Վօդէսէնիկայա կոչված փողոցում, երրորդը Երևանեան հրապարակում, չորրորդը Աբաս-Աբաղեան հրապարակում և այլն: Այդ տեսակ մեծ հեռաւորութեան պատճառով ջրիկը մշակները, որոնք տակաւներով են ջուր կրում և վաճառում չնչին գնով, հրաժարվում են ջրաժան ծորակից հեռու գտնվող բնակարանը ջուր մատակարարելու:

ԲԱԳՈՒԻՅ մեզ գրում են: «Ամսիս 3-ին յօգուտ Զէյթունի հրկիզեալների, տեղիս կուրբի դահլիճում հայ թաղամասերները ներկայացում տուեցին խաղացին երկու վողբիլներ. խաղացողները բոլորն էլ լաւ կատարեցին իրանց դերերը: Անարակներում աճում էր Նոյեմբի օրկեստրը: Ներկայացումից յետոյ պարեր եղան Լսում ենք, որ այդ երեկոյից մօտ 500 բուլբուլ մտաք է եղել:

Բացախօս ժողովուրդի համար վրացիներն աղօթաբեր և ուղարկներ տարածելով ժողովուրդի մէջ: Այդ բաւական չէ. այդ վրացական հայ-լատինացած քահանաները ամեն հնար գործ են դնում հայ-կաթօլիկ ժողովուրդին մոռանալ տալ հայ լիւնը. նախ ամեն մի դէպքից օգուտ են քաղում գրգռել վրացական հայ-կաթօլիկներին և խառնակել ժողովուրդը, որպէս զի կրօնական երկպառակութիւնների պատճառով կարողանան աւելի ճնշել, հարստահարել կրօնաւոր ժողովուրդը և գրկել նրան ինքնաձեռնաշուկեան պաշտօնարկից:

Այդպիսի հանգամանքների ազդեցութեան տակ առաջ եկաւ Ախալցխայի վրացական և հայական հայ-կաթօլիկների եկեղեցական վէճը, որը իր ժամանակ բաւական աղմուկ առաջացրեց ժողովուրդի մէջ: Վրացական հայ-կաթօլիկները կամենում էին բացառապէս տէր լինել եկեղեցական ներքին իրաւանց վրա, և եկեղեցական արարողութեան մէջ մտցնել նախ վրաց լեզուն, ապա և լատինական ձէսերը և արարողութիւնները: Գորան ընդդիմացան հայ-կաթօլիկները:

Խնդիրը ներկայացաւ Սարատովի լատին եպիսկոպոսին և կառավարութեանը: Թէ Սարատովի լատին եպիսկոպոսը, և թէ ուստաց կառավարութիւնը խնդիրը քննելով, վճռեցին հայ-կաթօլիկութեան օգտին և այդպիսով խնդիրը, ըստ երեւոյթի, հանարարեցաւ:

Եթէ հայ-կաթօլիկները փոքր ինչ թուլութիւն ունենային, վրացական հայ-կաթօլիկները արդէն զրաւած կը լինէին եկեղեցին և հայ-կաթօլիկութեան ձէսը և արարողութիւնը իսպառ վերցրած այնտեղից:

Բայց պէտք է դիտենալ, որ վրացականութեան պաշտպան էին Ախալցխայում այնպիսի քահանա-

Գործին գրում են կանգնել պ. պ. Ղուկասեանց և Դահլէզեանեանց:

ԲԱԳՈՒԻՅ կէրօսինի գործարանատէրերը, ինչպէս մեզ գրում են, այժմ անտանելի դրութեան մէջ են: Մինչև այժմ կէրօսինի վաղօնը (600 պուդ) ծախվում էր 160—170 բուլբուլ իսկ այժմ 50 բուլբուլ էլ առնող չը կայ, այն ինչ իրանց, կէրօսինատէրերին, նստում է նոյն վաղօնը 90—95 բուլբուլ: Ստիպված են, ուրեմն, վնասով ծախել: Գործարանատէրերը երկու կրակի մէջ են. եթէ ծախում են,—վնաս են կրում, եթէ չեն ծախում,—պարտաւոր են երկաթուղու վարչութեանը օրական իւրաքանչիւր վաղօնի համար 1 բ. 50 կօպ. տուգանք վճարել վաղօնի կանգնելու համար (38 полешах): Կէրօսինի գներին այդ յանկարծակի անկումն զանազան տեսակ են բացատրում, ոմանք ասում են ակցիդի պատճառով է, ոմանք էլ որ նախկին շոգենակերը Սև ծովի վրա քիչ թուով լինելով, միջոց չը կայ այդքան կէրօսին բեռնել շոգենակերում, արտասահման տանելու համար: Ոմանք էլ, վերջապէս վերաբերում են կէրօսին գների անկումն Բոսփորի ջանքերին՝ վայր գցել գները այն նպատակով, որ ժամանակով կարողանայ ստիպել բոլոր գործարանատէրերին կապվել իրան հետ:

ԳՈՐԴՈՒՅ մեզ գրում են: «Գորու գաւառի քաղաքային գիւղերից մէկը Բուրիս կոչված հայ գիւղն է, որտեղ գտնվում է գիւղական միջաւան ուսումնարան, որի աշակերտներին մեծամասնութիւնը հայեր են: Այժմ այդ գիւղում հայ ծխատէր քահանայի տեղը թափուր է մնացել: Ցանկալի է, որ օրինաւոր քահանայ նշանակվի և ոչ թէ մի օր և է աղէտ, անգրագետ տիրացու ձեռնադրվի քահանայ, ինչպէս և դիտարկութիւն կայ, մեզ հասած լուրերին համաձայն:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են, որ այդ քաղաքի մասնաւոր զարդի մի աշակերտ, Զանգեզուր գաւառի Նշավարտ գիւղի բնակիչ, փետրվարի 28-ին ուսուցիչ ժամանակ խնդրվեցաւ և րօպէսպէս մեռաւ: Ուսուցիչ ժամանակ ողորմելու կոկորդի մէջ մնացել էր մի ինչ որ ոսկորի կտորը:

Կերակի օր, մարտի 6-ին, Թիֆլիսի հասարակութիւնը վերջին հրաժեշտն էր տալիս ներկայ սէզոնի օպերայի խմբին: Հասարակութիւնը բոլոր դերասաններին քիչ բացառութեամբ լաւ ընդունեց, ծափահարութիւններին վերջ չը կար ջանազան երգչներին տրվեցան այդ երեկոյեան աւելի քան քառասուն պարգևներ: Ինչպէս լսում ենք, դալ տարվայ օպերային խումբը գրեթէ արդէն

ներ, որոնք աշակերտելով հայր Աղէքսանդր վարդապետի մօտ, քահանայ ձեռնադրվելու ժամանակ ուխտել են հաւատարմի մնալ հայ-կաթօլիկ եկեղեցուն, իսկ յետոյ վերադառնալով հայրենիքը արդէն գործիք էին դառնել վրացական լատինացած քահանաների ձեռքին և ուխտադրուծ համարձակութեամբ աշխատում էին ի վնաս մայրենի եկեղեցուն:

Այդ քահանաներից մէկը մինչև անգամ քաջութեան ունեցաւ վրաց մամուլի մէջ խեղդատակ միամտութեամբ ապագոյցանել, թէ՛ ամենահին ազդը վրացիք են և թէ վրացի կաթօլիկութիւնը եղել է շատ առաջ:

Այդ քահանային աւելի լաւ կը լինէր եթէ նախ իր ընտանիքի տոհմագրութիւնը ուսումնասիրէր, չը մոռանար իր ազգանունի հայ լինելը, և որպէս կենդանի ապացոյց իր ժողովուրդի ազգութեան, հետաքրքրվէր ժողովուրդի անցեալով, սովորութիւններով, յատուկ անունների որոշիչ ուղղադրութեամբ, հին ձեռագրերով, տապանաքարերով և ժողովուրդի կենդանի մնացած աւանդութեամբ, որով նա կարող էր լիապէս համոզվել, որ իր նախնիքը եղել են մաքուր հայեր, և իր այդպիսի խոստովանութիւնը կարող էր աւելի պատիւ և ինքնանաճանաչութեան գաղափար առաջ բերել, քան թէ ազգուրացութեան անունը ժառանգել բոլորովին անտեղի պայմաններում Սեր կրօնակիր վրացական հայ-կաթօլիկներին առաւել ևս ապահովանելու համար, այստեղ հարկաւոր եմ համարում մի հին ձեռագիր օրինակ առաջ բերել, որով նորա կարող են համոզվել որ իրանց նախնիքը եղել են հայ-կաթօլիկներ և հայ ազգութեան պատկանող անդամներ:

(Կը շարունակվի)

գլխավորական գնդի պրոսպեկտն համադրեցեալ և կրում էր ՎԱ արժէի ժապաւնը:

Կ. ՊՈԼԻՍ, 5 մարտի Սպասում են Բ. Դրան կողմից աւելի վճռական գործողութեան Բաղա-րիայի վերաբերութեամբ, Բերլինի կառավարու-թեան քաղաքականութեան պատճառով, որը Սուլթանի վրա բարեյաջող տպաւորութիւն է գործել: Մեծ-վիզիրը դրութիւնը, որը անընդհատ ինտրիգաներ է եղել յարուցանում բազմաթիւ հարցի վերաբերութեամբ եւանդուն քաղաքակա-նութիւն գործ դնելու դէմ, — տատանված է և նրա անկումը հաւանական են համարում:

ՓԱՐԻՉ, 5 մարտի Պարլամենտական շրջանե-րում խօսում են, որ հարց է յարուցված Բուլան-ժէին ղեկավարական քննիչ յանձնաժողովի դատին ենթարկելու մասին՝ նրան զօրաբանակի ցուցա-կից հանելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 5 մարտի Բերլինի ռուսաց դես-պան կոմս Դուվալով հեռագրով հաղորդելով այն այցելութեան մասին, որ Վիեննայի կայսրի թաղ-ման առիթով Բերլին եկած թագաժառանգը և Մեծ-Իշխանները արել են զերմանացոց կայսրին և նրա ամուսնուն, աւելացնում է, որ ընդունե-լութիւնը շատ անկեղծ և սրտաշարժ էր:

ԲԵՐԼԻՆ, 5 մարտի: Թագաժառանգը և Մեծ Իշխաններ Նիկոլայ և Միխայիլ Նիկոլայիչները, որոնց զերմանական թագաժառանգը ուղեկցեց դէ-պի ռուսաց դեսպանատունը, այնտեղ ընդունեցին՝ Հենրիխ Ալեքսանդր և Գեորգ պրինցներին, նոյնպէս և իշխան Բիսմարկին, որանից յետոյ այցելութիւն գնացին այլի կայսրուհուն, ապա գնացին Դար-լոտընբուրգ կայսերական զոյգի մօտ և այցելե-ցին Սթոլտեկին: Նոյն Բաթմարթիւնները փոխա-դարձ այցելութիւն արեցին նոյնպէս և Սալսո-նիայի և Բուլմինայի թագաւորներին, Ուէլսի պը-րինցին և աստորիական թագաժառանգին: Այսօ-րից յետոյ, ժամը 2-ին, Բերլին հասաւ իտալացոց թագաժառանգը և իսկոյն գնաց հանդուցեալ կայսր Վիլհելմի դիակին երկրպագելու:

ԲՈՒՐՆԵՄԱՌՏ, 5 մարտի Այսօր կատարվեցաւ պրինց Օսկարի ամուսնութիւնը Մունի օրիորդի հետ:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 5 մարտի: Հրատարակված են քրէական դատավարութեան կանոնադրութեան փոփոխութիւնները և յաւելումները՝ բացակայ գործավարութեան վերաբերութեամբ:

ՎԼԱԴԻՎԱՍՏՈՎ, 5 մարտի: Հարաւ-Ուստրեան երկաթուղու դժի վերաբերեալ հետազոտութիւն-ները աւարտվեցան:

ԲԵՐԼԻՆ, 5 մարտի: Բոլոր փողոցների վրա որ-տեղով պէտք է անցնի յուզարկաւորութեան հան-դիսաւոր գնացքը, խմբով է անցանքը բազմու-թիւն, չը նայած, որ 10 աստիճան ցուրտ է. չորս կարգ զինուորներ են կանգնած, զինուորա-կանները վերանազգեստով են. տները և լապտե-րասիւնները սնուարված են, իւրաքանչիւր 20 քայլի վրա կանգնեցրած են ջահեր. փարիզեան հրապարակի վրա կանգնեցրած են պատուա-ն:

Հանդեր գաղութներով. Բրանդենբուրգեան հրա-պարակի վրա կառուցված էր յաղթական կամար զանազան մակարութիւններով. իսկ տաճարի ա-ռաջ՝ Քրիստոսի հոյակապ քոյարկած արձանը: Ժամը 11-ից սկսվեցաւ զանգահարութիւնը ու ժա-մասացութիւնը տաճարում. Ֆրիդրիխ կայսրը չը կարողացաւ ներկայ լինել թաղմանը: Բիսմարկ և Մօլտեի թաղման հանդիսին չէին մասնակցում: Թագաժառանգը կանգնած էր տաճարի մէջ տեղը՝ կայսերական զօրջի տակ, նրա հետ մի շարքում տեղաւորվեցան բարձր հիւրերը և օտար պետու-թիւնների ներկայացուցիչները 12 ժամին, 45 րոպէին, երբ պալատական քարոզիչը օր-նեց դիակը, տեղի ունեցան հրացանաձու-թիւններ, հանդիսագնացը կարգադրվեցաւ և ա-պա յուզարկաւորութիւնը դիմեց Դարլոտըն-բուրգ, դէպի հանգստարանը Ֆրիդրիխ կայսրը կանգնած էր պատուհանի մօտ, մինչև որ թնդա-նօթի օրոտումները յայտնեցին թաղման ծխակա-տարութեան վերջնաւոր մասին: Ժամը 7-ին Բերլինի պալատի մէջ տեղի կունենայ ընտանե-կան ճաշկերոյթ, որին ներկայ կը լինեն և բար-ձր հիւրերը: Հանդուցեալ կայսրի դադարի վրա, ի միջի այլոց, պահներ դրեցին Մոսկվայի և Կի-էվի զերմանական պատգամաւորութիւնները:

ՓԱՐԻՉ, 5 մարտի: Բուլանժէ վճռեց հրաժար-կան չը տալ: Նրա կողմնակիցները մտադիր են առաջադրել նրա թեկնածութիւնը ամեն տեղ, ուր կարելի է:

ԲԵՐԼԻՆ, 5 մարտի: Լրագիրները յայտնում են, որ այժմ Գերմանիայի և Ռուսաստանի բարեկա-մական յարաբերութիւնները վերականգնելու յոյ-սերը մեծացել են, և որ զրանց մէջ առևտրա-կան պայմանագիր հաստատելու հարցի վերաբե-րեալ լուրերը ընդունվում են համակրութեամբ. բայց զրա հետ մասնաինչ է անվում այդ ցան-կութիւնները իրագործելու գործնական դժուարու-թիւնների վրա: Ֆրիդրիխ կայսրի առողջութիւնը զոհացուցիչ է:

ՓԱՐԻՉ, 5 մարտի: Գենրալ Բուլանժէի փոխա-րէն 13-րդ զօրաբաժնի հրամանատար է նշանակ-վել Գենրալ Վօրնօ:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 6 մարտի: «Грехованикъ» լրագրի հատով ծախելը նորից թոյլատրվեցաւ:

ԲԵՐԼԻՆ, 6 մարտի: Թագաժառանգը և Մեծ Իշխաններ Նիկոլայ և Միխայիլ Նիկոլայիչները երէկ երեկոյեան ուղևորվեցան Պետերբուրգ:

ՎԱՐՆԱ, 6 մարտի: Բաղարական կառավարիչ-ները ուղւում են պատասխանել Բ. Դրան յայտա-գրին, որը վերաբերում է Կօրուրդեան պրինցի իշ-խանութեան ապօրինութեան, այն ժամանակ երբ կը պարզվի քաղաքական դրութիւնը՝ Վիեննայի կայսրի մահվանից յետոյ: Նիկոլով խորհուրդ է տալիս Բ. Դրանը պահանջել Կօրուրդեան պրին-ցի հեռանալը Բաղարական:

Խմբագիր-հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հանգստեալ ԳԱԻԹ ՆԵՐՍԵՍԱՆԻ ամուսինը և նրա ընկերները խնդրում են հանգուցեալի յիշատակը յարգողներին ներկայ լինել նրա հողահանգիստին, որը պէտք է կատարվի Բագուի Ս. Լուսաւորիչ եկեղեցում, մարտի 13-ին, կիրակի օր, պատարագից յետոյ:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, մարտի 17-ին, ԳԱԼԻԱ (LA GAULE) շոգեւաւոր, նաւապետ ԳԱՐ-ՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսել: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում լէմբողուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Ար-ճրուէի գալլիերէում, № 103.

„ԱՂԲԻՐԻ“ ՎԱՃԱՌԱՆՈՑ
Թիֆլիս, Գօլովինսկի պրօսպեկտ տ. Միրզոխի

Թիֆլիսում բացված է „Աղբիւր“ վաճառանոց, յատկապէս երեխաների, աշա-կերտների և ընտանիքների համար: „Աղբիւր“ վաճառանոցում ծախվում են մանկա-կան գրքեր, պատկերներ, նկարներ, նօտաներ, բազմատեսակ շքեղ իրեղէններ երեխա-ներին և աշակերտներին ընծայելու համար. դպրոցական և դասական հարուստ և բազմատեսակ պիտոյքներ. տպվում են նոյն վաճառանոցում մօնօգրաւիներ (զարդարուն զլխատուներ նամակների ձևկատներին). գրելու, փօստի և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ամեն տեսակ ընտիր ԹՂԹԻ ՄԵՍ ՊԱՆՏՈՒՄ, որ կազմում է Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳԻ ՎԱՐԳՈՒՆԻՆ ԵՎԱԹՐԵՆ-ՐԻ ՀՈՋԱՎԱՌՈՐ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՎԱՍՍԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԲԸ:

Վաճառանոցը ընդունում է Ռուսաստանում և արտասահմանում հրատարակվող մանկական թերթերի բաժանորդագրութիւն:

Վաճառանոցը կամենայով դիրացնել զաւառաբանակ հեղինակների, թարգմանիչ-ների գործը, ընդունում է Թիֆլիսում տպողներ տալու նրանց աշխատութիւնները: Ընդունում է միջնորդ լինել և պատուիրել իրանց համար ամեն տեսակ պատկերներ, կլիշայներ վարձու է տալիս „Աղբիւր“ ծաղկատուներից և նկարներից: Վաճառանո-ցը ընդունում է կօմիսայով ծախելու զանազան հրատարակութիւններ:

Վաճառանոցում գետեղված է և „Աղբիւր“ խմբագրութեան գրասենեակը, ուր միայն կարելի է բաժանորդ գրվել „Աղբիւրին“:

Օտարաբարաբացիք դիմում են՝ Тифлисъ. Магазины Дѣтскаго журнала „Агдоуръ“.

ԳՈՐԾԱՐԱՆ
ԱՐՈՒՆՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄԻԳԱՅԻՆ ԵՒ ԳԱՋԱՅԻՆ ՋՐԵՐԻ
Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ
ԲԱԹՈՒՄՈՒՄ
(Ցելովիշայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գետեղվում է Լօբկօ և ընկ. տպարանը):

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա-նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ՃԱՄԱ-ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՋԱՆՋՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍՏԻ մի ՊՐՕՎԻԶՕՐԻ, որ փորձառու-թիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում Գործարանն ունի ամենամոր ձեւ մեքենաներ, նոյնպէս և ջրի խառնուրդ հաշակուրդ ֆԻԼՏՐ, որը միակ է, որ աշողութեամբ մաքրում է ջրերը կապա-րից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղբից և գերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզոր մշտապէս գտնվում է և անձամբ պարագլու է իմ գործարանում շնորհով այն օ-ժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անախտական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բայց դէտէքեան, մրգային և զաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱ-ԿԱԿԱՆ ԲՈՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ ՎԻԼԻ, ԷՍԻ, Կարլսբադի, Մարիենբադի ջրերը, լու-ժողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կա-նօններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հոշա-կաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գե-րազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ գրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամա-նակ պարունակելով իրանց մէջ ածխածնի գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ա-խորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաք-րութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածայնութիւններից խոստովելու համար, խոստովեալ խնդրում եմ իմ ջրերի գործածող-բերին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 9—50 (Ե)

ԲՈՇԿԱԿԱՆ ԲԵՆԿԼԵՎԱԿԻԻ

Բժշկական ընդունարանը: Հիւանդները ընդունվում են ամեն օր 9-ից մինչև 11 ժամ առաւօտեան և 4-ից մինչև 6 ժամ երեկոյեան. սիֆիլիսի, կոկորդային, լեպտիա, ախանջի և ատամի ցաւերի բժշկութիւնը, պլոմբելը և ատամները դնելը (ա ս ի ս տ է ն տ ա տ ա մ ն ա բ ո յ ժ Ս օ բ օ լ է վ): Ատամի ցաւով հիւանդների ընդու-նելութիւնը 9-ից մինչև 7 ժամ: Գօլովինսկի պրօսպեկտ, տուն նախկին Բէլայ ՁԵ 5:

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԵԺԱՆ ԳՆՈՎ:

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՌՈՐ ՋԵՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

Գործարան Գ. Ա. ՏԵՐ-ԱՍՏԱՆՈՒՆԵԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԵՐԱ Կոչված

Թաղում: 25—50

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 11/23 մարտի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգեւաւ ALPHÉE (ԱԼ-ՖԷ) նաւապետ FOURNIER (ՖՈՒՐՆԻԷ) մանելով Կ. Պօլիս, Զմիռնիա և Սիրա:
Ագէնաները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԵՐ, իսկ Թիֆլիսում ԳԵՆՐԻ ՀԵՋՈՒՐԵԱՆ
ՀԵՋՈՒՐԵԱՆՑ: 1—1

ԾԵՐԵՆՑԻ (ԳՕԿՏՐ ՇԵՄԱՆԵԱՆԻ)

Պատմական վէպերը	չին է 1 րուրի
1. Թորոս Լեւոնի	1
2. Երկունք իններորդ դարու	1
3. Թեոդորոս Ռշտունի	1

Վաճառվում են զրանց հրատարակող Զաքարիա Գրիգորեանցի „ԿՈՎԱՍՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ“ : Հանսէյն. Тифлисъ „Кавказская Книжная Торговля“.

ԿՈՎԱՍՍԵԱՆ ԳԻՐՎԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԹԻՖ-ԼԻՍԻ ԴՊՐՈՑՈՒՄ Վաճառվում են ամեն տեսակ թէ մրդաստու և թէ զարդի ԲՈՑՍԵՐԸ: Պահանջման ժամանակ պրէյսկուրանտները անվարձ են ուղարկվում: